զԵդրէն սպանեցին. Աստուած ողորմի իւրեանց հոգին։ — Եւ ի սոյն ամին Բան Եանկինդարն (առ) Աստուած փոխեցաւ, և Զրխն Դանիելա?

1562. Թվ. ՌԺԱ. Ի օրն Երկրորդ Ծաղկազարդին Ֆրանգի եպիսկոպոսն Գժեոնց Լենարդն, քաջ հռետոր և բանիբուն վարդապետ, փոխեցաւ առ Աստուած. զոր մարդասէրն Աստուած զիւր հոգին դասեսցէ ընդ արդարսն և ընդ աստուածաբան սուրբ վարդապետսն. քանզի երախտաւոր էր ընդ Հայոց ազգին. և քան զնափն աւելի ընդունելով ընդունէր, միշտ ու հանապազ ի սեղանս կոչելով և հացակից առնելով. և 16 ամ կալաւ զաթոռ Կամենից վիճակի զաթոռն։

1562. Հայոց Թվ. ՌԺԱ. Մայիս ամսոյ Ժ. օրն կիրակի Երկրորդ Ծաղկազարդին, Ֆրանգի եպիսկոպոսն Գժոնց Լենարդ Սլունչովքէ առ Աստուած փոխեցաւ ի Կամենիցս. զոր էր ազնիւ բանիբուն վարդապետ և քաջ հռետոր. Աստուած ողորմի հոգոյ նորա։

1562. Հայոց Թվ. ՌԺԱ, և Օգոստոսի ԺԵ, օրն շաբաթն. զոր էր տօնն հռչակելի և հրաշալի Տիրամօրն Սրբոյ Կուսի Աստուածածնին։ Այս դուքս որ կոչի Տեսրոթն, զոր կացոյց տէրն իշխան ի վերայ այդ խուժադուժ երկրին Օլախաց, զոր ամենազօրն Աստուած իւր մարդասիրութեամբն հաստատեսցէ զնա ի վերայ իշխանութեան իւրոյ՝ մինչեւ ի խոր ծերութիւն անսասանելի և անշարժելի, յաղագս ողորմելի և եղկելի անտիրացեալ ազգիս Հայոց. զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցեն զկեանս իւրեանց ի վերայ Հայկազեան և յաբեթածին օրինացն. զոր ունին կարգեալ ի հօրէ իւրեանց Սրբոյ Գրիգորէ Հայաստանեաց սուրբ Լուսաւորչին։ Ի սմին աւուր զոր առաջագոյն գրեցաք, Աստուծոյ հրամանաւն և քրիստոնէից կայսեր հրամանաւ՝ իւր իշխանութեան վերայ թագ կապեաց և պսակեցաւ որպէս օրէնն է, օծեալ և թագաւորեալ թագաւորացն, և ի նոյն օրն քարոզ կարդալ ետ, որ ամենայն ոք թագաւոր անուն կոչեսցէ զնա. զոր բնաւ այսպիսի ինչ երբեք ոչ էր լեալ ի այդ երկիրն, ի սկզբանէ իշխանաց մինչեւ ի նա, և ոչ ունէր օրինակ նախ քան զինքն ի այդ երկիրն, և ոչ ի նախնեաց և ի ծնողաց իւրոց. թէպէտ զինքն որդի իշխանի անուանել ետ, բայց ոչ էր յայտնապէս և ճշգրտիւ՝ եթէ իցէ որդի օծեալ և թագապսակ թագաւորի, որպէս օրէն է թագաւորաց՝ որդիս յորդիս յազգէ յազգ յաւիտեանս՝ պսակել ըստ ժամանակի իւրեանց. այլ սա իւր իշխան կամաք և բարձր հրամանաւն սահմանեց և հաստատեցաւ ամենազօր երկնաւոր թագաւորին կարողութեամբ. զոր Տէր Յիսուս պահեսցէ զնա խաղաղական կենաց, և աչն Աստուծոյ ամենակալին եղիցի ի վերայ նորա պահապան, զի փրկեսցէ զնա յամենայն թշնամեաց իւրոց և ի ձեռաց ատելեացն, և հաստատեսցէ զնա ի վերայ իշխանութեան իւրոյ անխախտելի. խորհելով զհամոյն Աստուծոյ և զբարին յԱստուծոյ՝ առ ամենայն ազգս, եւս առաւել առ ողորմելի Հայոց ազգն. զի փոքր մի ժամանակ հանգիստ գտցեն իւրեանց հալածանաց և նեղութեանց. զոր ի անձն առին անօրէն և անհա-